

վոյիս թագաւորական ջունին պատուց կղզեակս Ն. Ա. Բարձրութիւն Ալուսայի Դուքը, իշխան «Emanuele Filiberto di Savoia», հօրեղորորդի Խոտալիս այժման վեհապետին: Յետ պատշաճ ընդունելութիւններու - յորս մեծ հասարարու-

թիւն ցոյց տուաւ հայկական նիւթերու և ինդիրներու - իրեն ընծայուեցաւ տպարանին մէջ փառակազմ բազմալեզուեան «Հաստով խոստովահիմ»: Յոյժ սրտազին էր իր գոհութիւնը հրաժեշտի պահուն: Հ. Դ. Ցածես

## ԱՄՈՒՆՏԱԸՆԿ ԿԸ ՊԱՏՄԵ

Իր դէպի սննդանօթը սաւառնումը եւ սառույցներու դէմ ունեցած գերմարդկային մարտը

(Շարումակութիւն տես Բազմավէպ 1925, էջ 238)

ԳԱՀԱՎԻԺԱԿԱՆ ԷԶՔԸ

ՈՒԽԻ ԽՁԱՆ ԵՆ ՄԵՐ ԸՆԿԵՐՈՒԲԸ:

Հիմայ սառնեղէն հաստատուն պատերով սրահակէ մը կը սաւառնից: Վարիչնելու զննութիւններ կատարելու ժամանակին՝ զէպ մը կը պատահի որ զմեզ կը բոնադատի ստացին պատեհէն օգտուիլ: Մօրուը յետոյք ըն բոցեր կ'արձէն, որնն էլ սպառնան կեցնել: Վերջն իմացանց որ այս բանը օդի խուսափելուն վերացելու էր ցան մօրուին իրական պակասութեան: Բարեբախտաբար առջևնիս ունինց սառնեղէն սրահակի փոքրիկ և անձուկ թէ մը՝ որ կ'երկարի երկու բարձր պատերու միջնէ: Եւ որովհետեւ սաւառնակը շատ ծանր է ու մէկ մօրուով չի կրնար օրոյ մէջ կենալ, Ծիսըր - Լարսըն երկու մօրուներն ալ դադրեցնելով վար կ'իջնէ, սաւառնակը տանելով նորակազմ սառոյցի գօտիին կողմը: Երագութիւնը շատ նուազած է, սակայն ատ ալ վտանգաւոր է, վասն զի սրահակը նեղնալով սաւառնակին թևերը պատերուն երկու կողքին կը բառւի: Որահակի ծայրը սառի հոծ դէզզեր կան, որ միրճուելով կանգ կ'առնենց: Սառոյցին վրայ կ'իջնենք, սաւառնակը ամենակի վնասուած չէ, կ'աշխատինց սրահին աելի լայն կողմը փոխարիել Զավազանց յոգնեցուցիչ է այս աշխատութիւնը, որովհետեւ խեչափառի մը մազիներուն մէջ սեղմուածի պէս ենք:

Տիթրիչսըն տեսնելով մեր էջը, կը համարի որ Ծիսըր - Լարսըն պարզապէս յիշարած ըլլայ, այդցան ահաւոր դիրքի վրայ իջնելու համար, որովհետև կ'անգիտանար թէ մննց բռնազատուած էնինց իջնելու: Խնքը (Տիթրիչսըն) սառնեղէն գլխաւոր սրահին միւս կողմէն վար կ'իջնէ, որ շատ աւելի ազատ տեղ կայ շարժելու: Եւ որովհետեւ մեր սաւառնակէն շննց կը բնար տեսնել աննոց զործիցը, չնեց զիտեր անոնց վար իջնելլ և ոչ ալ էլլըս զորթի, Տիթրիչսընի և Օմտալի ուր զբանութիւր: Եթէ հոծ սառոյցը կծկուէր՝ 23 թիւ սաւառնակը պիտի ջախջախուէր, վասն զի երկու սառուցեալ բարձրաբերծ պատերու մէջ կը հանգչէր:

Գիշերը զննութիւններ կ'ընենք, որոնց ցոյց կու տան զէպ ի հիւսիս լայնութեան 87° 43' 2" և զէպ ի արեւմուտց 10° 19' 5" երկայնութեան աստիճանին վրայ զննուելնիս:

Իջնելու տեղ փնտուելու համար թռած ժամանակին թիւ մ'աւելի դէպ ի հիւսիս շեղած էինք: Սաւառնակը սառով կը ծածկով գիշերը:

Երկու ժամ հանգիստէ վերջ՝ առաւօտ ամէն ինչ կը պատրաստենց ուրով երթաւու զէպ ի գորումալիս գլուխը, եթէ սաւառնակը ջախջախուի կամ ֆիճահայ: 24

թի սաւառնակին տեղը գտնելու համար Արմար - Լարսըն և ես կարծատես խորզարկութեան զնութիւն կը կատարենք. խուզարկութիւննիս անօդուտ կ'ըլլայ. մեր մնկերներէն ոչ մէկ տեղեկութիւն չունինք, անու հանդերձ որ մեզ այնպէս թուեցաւ թէ հրացանի հարստած մը լսեցինք, ինչ որ իրենց ալ յետոյ հաստատեցին: Մեր փրկութեան ամէն հնարաւոր միջոց խորհելէն վերջ կ'որոշէնք ցոռուկին առջեւի սառոյցէ պատը խորտակել, պատ՝ որ հարսիւր մեղր երկայնութեամբ կամուրջ մը կը ձեւացնէր փոքրիկ պատառուածցներու վրայ:

Ոիսըր - Լարսըն՝ կացին մը կը գործածէ, ֆէօչ՝ սառոյցի համար խարիսխ մը, Ե՞ւ երկայն զանակ մը, և իրարու կապած ռալիթրափայտեր ու տակառաշերտեր:

Զենարկին ի սկզբան անյազթիվ կը թուի, սակայն ուրիշ նար չկայ. ու երրածէ մ'աւելի վարժութիւն կը սահանք, աշխատութիւննիս աւելի երազ յառաջանալ կը սկսի:

ԳՅԱՆԵԼՈՒ ԽՆԴՐԻԹԻՒՆԸ

Կէսօրին օդը շատ պայծառ է: Յանկարծակի, ի մեծ ուրախութիւն մնջ, բաւական հեռուն կը նշամարենք նորվեկեան դրօշն սառոյցի վրայ ծածանումք: 24 թիւին նաւորդներն են որ զայն բարձրութեան վրայ տնկած են, Մեր կարգին կը բարձրացնենք զրօշակը, սաստիկ կը յուզուինք նորվեկիցի երկու փոքրիկ զադութեառն այսցան դէպի հիւսիսմղուելուն մտածութեամբ: Ոիսըր - Լարսըն երկու բարիքափայտ և տակառի շերտեր իրարու կը կապէ, վրան կանգնելով մեր մետացսէ դրօշը, որուն ծածանումք մեր ընկերաց դրօշի ծածանումէն պատասխան կ'առնէ:

Նշաններու միջոցաւ փոխադարբար մէկմէկու կացութիւնը կ'իմանանք, կը հասկնանք որ 24 թիւս աւառնակը վայրէցին վտանգուած է և կրցած են ջրին երեսը մեալ միայն գիշեր ցորեկ ջրհանի ջուր պարպելովք:

Որոգաթէն - ուր ինկած ենք - դուրս եկելու կը կին հնարաւորութիւն ունենալու համար, նաև 24 թիւին նաւասարիներն ալ կ'աշխատին իրենց սաւառնակին մնկնիւը կարելի ընելու: Մինչդեռ նշաններու միջոցաւ զիրար տեղեակ նկանենք՝ անդին սառը կը սեղմէ, այնպէս որ մեր զըտնուած տեղերը սատիճանարար իրարու կը մօտենան, և կրնանց նաւագեռագակն նշաններ գործածել: Գիշերը բարեխառնութեան սատիճանը զրոյէն 12 գի վար կ'իջնէ, կաշիէ պարպէրու մէջ սաստիկ կը մանից: Ոիսըր - Լարսըն գործիքին յիտակողմը կը ննջէ, ֆէօչ սեղանատունը կը ցնանայ, ևս ուղիգնացութեան նաւասարիներու յարկարամնին մէջ: Մեր կերակուրները կը պատրաստենք մերայի գործիքով: Մայիս 25ին փոկեր կը տեսնենք, գիրախսարար անկարելի է որսալ: Յաջորդ օրը կը տեսնենք որ 24 թիւին նաւաստիները կը պատրաստուին մեզի զալու, և կը հանկնանց որ այլնս յուսակատած են, առանց օգնութեան, իրենց սաւառնակը փրկելէն: Նորակազմ սառոյցի սրահակէն կը բայլն, որպէս զի քանըցորս ժամուան երակայն շրջան մը չընեն: Անձկազին անոնց շարժութերուն կը հետեւիմ:

#### ՏԻԹՐԻՉՍՐԵ ԵՒ ՕՄՏԱԼ ՎՃԱՆԳԻ ՄԷՋ

Հանդարտացայլ կը մօտենան, ես ու Ոիսըր - Լարսըն անոնց ընդ առաջ կ'երթանց լաթէ փոքրիկ նաւակով մը՝ որպէս զի ջուրի փոքրիկ անջրպետէն անցնելու օգնենք: Ու յանկարծ կ'անհետանան: Այսաւոր վայրէկեան մը կը յաջորդէ, կը լսենք որ Տիթրիչսըն և Օմտալ օգնութիւն կ'աղաղակէն:

Մանրաբեռնուած՝ սառին վրայէն քաշելու, ժամանակ յանկարծակի կը խորասուզուին և հուժկու հոսանք մը կը սպառնայ զիրենք սառերուն տակ ընդգրարշ տասնիւ: Բարեխատարար լշլսպորթ որ ետենէն կու գար՝ կը վազէ ու կը յաջողի Տիթրիչս սընը զուրս հանելու, յիտոյ երկուուր միամին զուրս կը բաշեն Օմտալ ճէրգ իր

անհետանալու քանի մը վայրկեան մացած։ Մենք իրենց չէինք կրնալ որեիցէ կերպով օգնել, որովհենու առջենիս բարակ ասույցով պատած ջուրի միջոց մը կար, զոր անպատճան խորտակելու էինց կտաւէ նաւակը զործածելու համար։ Մեր ուրախութիւնը անձաւելի է, երբ սառուցէն վեր զլուինին կը տեսնենք։ Տիթրչչըն և Օմտաւ 25 թիւնին քրայ եկան, անոնց եռացած քարա տուփնից և չոր զգեստներ։ Իրենց կեանցըր փրկութեան գոտիին կը պարտին, զոր ճամփորդութեան պահուն զիւպուածով թումոյի մէջ զնած էին։

### ՍԱՌԻՑՑՆԵՐՈՒ ԱՔՑԱՆԻՆ ՄԻՋԵՒ

Հիմայ վեցերենիս ալ 25 թիւին անցք բանալու կ'աշխատինք։ Նախ կը ջանանց վիթխարի կտորները վերցնել, ապա աւելի պղափկները, ձեւն ալ մեր սեղափոխութեան աշխատութիւնը կը դիւրացնէ։

27ի իրիկունը անցըը բաց պատրաստ է, և մօրաները շարժման կը դնենց հակագիրի համար, և որպէս զի չափազանց շբանին՝ զառ ի վայր մը ձեւացուցած ենք, Սաւաննակը սառոյցներէն ազատելուն՝ Ռիսըր-Լարսըն դէպ ուղղի կը քչէ, բայց չի կրնար շարժել, և զարիվայրին կը հասնի մեր հինգերուս օգնութեամբ։ Քանի մը վայրկեան վերջ կը յաջողինք սաւառնակը առածամեայ դիրքի մը վրայ զետեղի, ճիշտ հարիւր մեղք անդին, երկու հարիւր մեղք երկայն տափարակ վայրի մը մէջ սրահակին կից։

Սաւառնակը սառերու սեղմումէն ազատ է հիմայ։ Գործիքը փրկելէն յետոյ 27ին իրիկունը պառկելու կ'երթանը, այնքան յոզնած էինք որ յաջորդ օրը մինչեւ էին օր կը ընանանք։

Մեկնիլ կարենալու համար Ռիսըր-Լարսըն կ'ըսէ, որ դէպ ի սրահակը տարածուող երկու հարիւր մեղք երկայնութեամբ հարթավայր մը պէտք է Դիքախտարար 28ի գիշերը, սրահին այս կողմը ուսկից մտադիր էինց մեկնիլ, ամէն կողմէն, սառնեղին պատերով կը սկսի կծկուիլ,

նեղնալ, նոյն օրը ջուրին խորութիւնը կը չափնենց որ 3750 մեղքի կը համար։

Որպէս զի հնարաւոր ըլլայ 25 թիւին շուրջը միջոց բանալ և երկար ատեն աշխատիլ, և միևնոյն ատեն բաւարար պաշար մնայ ի հարկին դէպի փոլումպին գլուխ չուել՝ օրական ոռնիկնին կը վերածնենց։ Նախաճաշին գաւաթ մը թանձը քարած կ'առնենց երեք կրկնեիփով, կ'ընթիւնըն անձ զլուս ութսուն կրամ պահծու մտով պատրաստուած ապուրով մը։ Ասով բնականացրած կը սկարանանց, բայց ամէն կերակուրէ վերջ կուշտ մը ծիրելու պաշարն ունինք։

### ՀԻՒՍԽԱՅԻՆ ԱՆՍԱՀՄԱՆ ՈՎԿԻԱՆԸ

Հոս պէտք է ըսենց որ մեր արշաւանքի զինաւոր նպատակն էր՝ հիւսխային Ավկիանոսի նորդեկեան մասի աշխարհազրաւական զննութիւնը, ողէն կասարուած։ Ակնարկնին ուղղելով լայնութեան  $88^{\circ} 30'$  աստիճանին՝ ցամաց երկրի հետեւ չենց նշամարեր։ Հոսանցները այնքան արագութեամբ զմեզ դէպի հարաւ մղած են որ ինքզինին  $87^{\circ} 23'$  աստիճանին վրայ կը գտնենք։ յետոյ հարաւ արեւելեան բուն հով մը դարձեալ  $87^{\circ} 33'$  ին տանի, ծովու ահազին խորութիւնը նշան է որ հիւսխի կողմերը ցամաց երկիրները չկան, ու փորձառութիւնը կը ցուցնէ որ անկարելի է վար իջնելու պատշաճ մեզ մը գտնել, ուսկից կարելի ըլլայ խնամքով բեւերի դիրքը ուսումնակիրել։

Այս խորհրդածութիւններով դէպի բեւեռ սաւառնիլ անօգուա գործ մը նկատեցինք, և անհամապատասխան յանձն առնելիք մնձ վասնգին։ Ուստի լաւագոյն համարեցանը Սրիցահերկըն վերապառնալ, թոշելով աւելի արեւելեան կողմը որպէս զի բարտէսին վրայ ճերմակ նշանակուած անխոյզ գոտիները կարենանց զննել։

(Ժարութակելի) ԱՌԱ.Տ ԱՄՈՒՆՏԱԾՆ  
Թրգմ. Հ. Մրագուս ՌԱՎՈՒՀՈՎԱՆ